ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ
(Գիտական հոդվածների պարբերական ժողովածու)

№ 13

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ФАКУЛЬТЕТ ВОСТОКОВЕДЕНИЯ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

(Периодический сборник научных статей)

№ 13

Ереван
Издательство ЕГУ
2017

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF ORIENTAL STUDIES

JOURNAL OF ORIENTAL STUDIES
(scholarly periodical journal)

№ 13

YEREVAN
YSU PRESS
2017

**Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի
արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ**

Խմբագրական խորհուրդ՝

Մելիքյան Գուրգեն բ. գ. թ., պրոֆեսոր *(նախագահ),* Մելքոնյան Ռուբեն բ.գ.թ., դոցենտ , Կարապետյան Ռուբեն պ.գ.դ., Խառատյան Ալբերտ պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ, Հովհաննիսյան Դավիթ բ.գ.թ., պրոֆեսոր, Հովհաննիսյան Լավրենտի բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթ.-անդամ, Ոսկանյան Վարդան բ.գ.թ., դոցենտ, Սարգսյան Լևոն պ.գ.դ., պրոֆեսոր, Սաֆարյան Ալեքսանդր պ.գ.թ., պրոֆեսոր, Սաֆրաստյան Ռուբեն պ.գ.դ, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Քոչարյան Հայկ պ.գ.թ., դոցենտ, Կուզնեցով Վասիլի պ.գ.թ., դոցենտ (Ռուսաստան), Տեր-Մաթևոսյան Վահրամ պ.գ.թ., Ռեպենկովա Մարիա բ.գ.դ., պրոֆեսոր (Ռուսաստան), Էքմեքչյան Լեռնա PhD (ԱՄՆ), Գրեկյան Երվանդ պ.գ.դ., Իլյա Յակուբովիչ բ.գ.դ, պրոֆեսոր (Գերմանիա), Ահմադջան Ղուրոնբեկով բ.գ.դ, պրոֆեսոր (Ուզբեկստան)

© ԵՊՀ հրատ., 2017

Չոբանյան Գայանե

ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՎՐԱ

Բանալի բառեր՝ *Իրան, Ադրբեջան, իսլամ, շիայական ուղղություն, քաղաքական ազդեցություն, Թուրքիա*

Ադրբեջանի Հանրապետությունն ունենալով ռազմավարական կարևոր աշխարհաքաղաքական դիրք և հանդիսանալով էներգառեսուրսների պաշարների աղբյուր՝ միշտ էլ հանդիսացել է ինչպես տարածաշրջանի, այնպես էլ համաշխարհային ուժային կենտրոնների շահերի բախման թատերաբեմ: Խորհրդային Միության փլուզումից հետո տարածաշրջանային պայքար ծավալվեց Թուրքիայի և Իրանի միջև՝ նորանկախ Ադրբեջանի Հանրապետությունը (ԱՀ) իրենց ազդեցության գոտու մեջ ներառելու համար: Կարելի է ասել՝ Ադրբեջանը դարձավ պանթյուրքիզմի և պանիսլամիզմի գաղափարական հակամարտության կռվադաշտ: Երկու երկրներն էլ գործի դրեցին «փափուկ ուժի» միջոցով քաղաքական ազդեցության զինանոցի բոլոր գործիքները, որոնցից Թուրքիայի համար առաջնային էր էթնո-լեզվական գործոնը, իսկ Իրանի համար՝ իսլամականը: Իրանից հետո երկրորդ երկիրը, որի բնակչության մեծամասնությունը իսլամի շիայական ուղղության հետևորդներ են, Ադրբեջանն է[1], հետևաբար Իրանի

[1] Պաշտոնական տվյալների համաձայն՝ Ադրբեջանի բնակչության 85%-ը իսլամի շիա ուղղության ջաֆարիական մազհաբի հետևորդներ են, իսկ 15%-ը՝

պետականաշինության իսլամական մոդելի ներդրումը Ադրբեջանում կհանդիսանար այն ամուր հիմքը, որի վրա կկառուցվեին ադրբեջանա-իրանական փոխշահավետ հարաբերությունները, ինչն էլ՝ Իրանին հնարավորություն կընձեռեր դուրս գալ տնտեսական շրջափակումից և ստանձնել տարածաշրջանային առաջատար ուժի դերը:

Սույն հոդվածում կանդրադառնանք Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) կողմից իսլամական գործոնի կիրառման մեթոդներին և հետևանքներին՝ որպես Ադրբեջանի Հանրապետության վրա ազդելու քաղաքական գործիք:

Ադրբեջանում Իրանի իսլամական ազդեցության քաղաքական նախադրյալները

Խորհրդային Ադրբեջանում դեռևս 1970-ական թվականներից սկիզբ էր առել իսլամական ավանդույթների վերարժևորման և իսլամի՝ որպես ազգային ինքնության անքակտելի մաս կազմելու գիտակցության ձևավորման գործընթացը: Իսլամական տրամադրությունների տարածմանը և ամրապնդմանը մեծապես նպաստեց կրոնական և պատմա-մշակութային որոշ ընդհանրություններ ունեցող հարևան Իրանում 1979թ. տեղի ունեցած իսլամական հեղափոխությունը: Իրանն Ադրբեջանին դիտարկում էր որպես շիայական իսլամական աշխարհի անքակտելի օղակ և իսլամական հեղափոխության «արտահանման» առաջնային երկիր: Իսլամական հեղափոխության առաջնորդ Իմամ Խոմեյնին սկսեց ընկալվել որպես սովետական համակարգի այլընտրանքային խորհրդանիշ: Նրա դիմանկարը հաճախ կարելի էր հանդիպել տներում և

սուննիական ուղղության հանաֆիական մազհաբի, Administrative Department of the Republic of Azerbaijan, Prezidential Library, http://www.webcitation.org/616xyRI4u:

փոքրիկ խանութներում, անկախ այն փաստից, որ այդ անձիք համակարծիք չէին նրա գաղափարախոսության և աշխարհընկալման հետ[2]: 1980-ական թթ. իրանական քարոզիչները հատկապես ակտիվ էին Բաքվի շրջակա գյուղերում, Նախիջևանում և Լենքորանում: Ադրբեջանի ազգային անվտանգության ծառայության տվյալների համաձայն՝ հենց այդ ժամանակ էլ շիայական կարևոր կենտրոն համարվող Նարդարան գյուղում, իրանական հեղափոխության ազդեցությամբ, առաջացավ առաջին շիայական քաղաքական ընդհատակյա «*Խոմեյնիչիլեր թեշքիլաթը*» («Խոմեյնականների կազմակերպություն»*)* [3]: Իրանական տարածքից ադրբեջաներեն հեռարձակվող կրոնական հեռուստա-ռադիոհաղորդումները հասանելի դարձան Ադրբեջանի տարածքում, ինչը հանգեցրեց ԽՍՀՄ կառավարության հակահիրանական քարոզչության ակտիվ գործարկմանը: Իրանական ազդեցությունը չեզոքացնելու նպատակով՝ իսլամական գաղափարախոսությանը հակադրվեց խորհրդային ղեկավարության կողմից ներդրված «միացյալ Ադրբեջանի» գաղափարը[4]: Սակայն 1980-ական թվականների վերջում սովետական իշխանությունների քաղաքականությունը ԻԻՀ նկատմամբ մեղմացավ, ինչն ուղղված էր Ադրբեջանի վրա Թուրքիայի աճող ազդեցության դեմ: ԻԻՀ-ն պաշտոնական

[2] Полонский А., Ислам в контексте общественной жизни современного Азербайджана, http://his.1september.ru/article.php?ID=199902802

[3] Юнусов А., Исламская Палитра Азербайджана, Баку, 2012, стр. 22.

[4] «Միացյալ Ադրբեջանի» կամ «Հարավային Ադրբեջանի» գաղափարը բազմիցս օգտագործվել է ԽՍՀՄ ղեկավարության կողմից Իրանի վրա ճնշում գործադրելու նպատակով և իր գագաթնակետին է հասել 1940-ական թվականների կեսերին, երբ խորհրդային ուժերն Իրանի հյուսիսային շրջաններում փորձեցին ձևավորել Ադրբեջանի Ինքնավար Հնարապետություն: Մանրամասն տե՛ս L'Estrange Fawcett L., Iran and the Cold War. The Azerbaijan Crisis of 1946, Cambridge University Press, 1992:

մակարդակով շտապեց բարիդրացիական հարաբերություններ հաստատել դեռևս խորհրդային Ադրբեջանի հետ: Բաքվում գտնվող հյուպատոսությունը միակ դիվանագիտական օղակն էր Խորհրդային Միության և ԻԻՀ-ի միջև: 1989 թ. Թեհրանը և Մոսկվան ստորագրեցին հյուպատոսական մի համաձայնագիր, որը նախատեսում էր 45 կիլոմետրանոց սահմանային գծի երկու կողմերում բնակվող քաղաքացիներին առանց վիզայի՝ տեղական իշխանությունների թույլտվությամբ, հատել սահմանը: Թուրքիայի կողմից հրահրվող ազգայնամոլական գաղափարների ազդեցությամբ աճող հակասովետական տրամադրությունները Ադրբեջանում Իրանի հոգևոր առաջնորդ այաթոլլահ Խոմեյնին փորձում էր ներկայացնել որպես տեղացի ժողովրդի իսլամական զգացումների պոռթկում[5]: Ղարաբաղյան հակամարտության բռնկումը, սոցիալ-տնտեսական ծանր դրությունը, գաղափարական վակուումը, Ադրբեջանի կառավարության կողմից իսլամի քաղաքականացումը հանգեցրեցին երկրում իսլամական տրամադրությունների ուժեղացմանը և Իրանի կրոնական ազդեցության մեծացման հավանականությանը: Այդ ժամանակաշրջանում այաթոլլահ Իմամ Խոմեյնին հանդես եկավ ղարաբաղյան հակամարտության մեջ ադրբեջանցիներին աջակցելու պատրաստակամության հայտարարություններով: 1990 թ. Ադրբեջանում տիրող ներքաղաքական քաոսային մթնոլորտում ուժեղացան Իրանից ահագնացող կրոնական քարոզչությունը, մուսուլման ադրբեջանցի եղբայրներին սովետական «կեղեքումներից» ազատելու կոչերը և սովետական Ադրբեջանի նեքին զորձերին միջամտելու փորձերը:

[5] Տե՛ս Iran Times, vol. 11, no. 247, 22 January, 1990, մեջբերված է Sattarov R., Islamic revival and activism in Azerbaijan, p. 166, Radical Islam in the Former Soviet Union, ed. Yemelianova G. M., Routledge, 2009.

1990 թ. հունվարի 19-ին Նախիջանի Ինքնավար Հանրապետության Գերագույն Խորհուրդը որոշում ընունեց ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին և վկայակոչելով 1921թ. Կարսի պայմանագիրը, օգնության խնդրանքով դիմեց Թուրքիայի Հանրապետությանը, ինչպես նաև Իրանի Իսլամական Հանրապետությանը, ՄԱԿ-ին և մի շարք այլ պետությունների ու միջազգային կազմակերպությունների: Հենց այդ ժամանակվանից սկսած Իրանը գործուն կերպով ներգրավվեց ադրբեջանական քաղաքականության ոլորտ՝ որպես տարածաշրջանային ուժի ազդու կենտրոն[6]:

ԻԻՀ-ն առաջիններից մեկն էր, ով ճանաչեց Ադրբեջանի Հանրապետությունը (1991թ. մարտի 12-ին) և քաղաքական, տնտեսական, ռազմական օժանդակություն ցուցաբերելով՝ կարևոր դեր խաղաց Ադրբեջանի Հանրապետության կայացման գործընթացում: 1991թ. հոկտեմբերին Բաքվի հյուպատոսությունը վերածվեց դեսպանատան: ԻԻՀ ԱԳՆ-ն ընդունեց հատուկ որոշում, որի համաձայն ամբողջ աշխարհում Իրանի դեսպանությունները պետք է աջակցեին և զանազան ծառայություններ մատուցեին ինչպես ադրբեջանական դիվանագետներին, այնպես էլ այդ հանրապետության քաղաքացիներին[7]:

Թուրքիայից քարոզվող ազգայնամոլկան գաղափարախոսության ազդեցությունը Ադրբեջանում չեզոքացնելու նպատակով, ինչը սպառնալիք էր Իրանի տարածքային ամբողջականության և ազգային անվտանգության համար, Իրանը ԱՀ-ի հետ արտաքին հարաբերություններում

[6] Բայբուրդյան Վ., Իրան-Ադրբեջան. Հարևանն՞ը թե՞ աշխարհաքաղաքական ու աշխարհատնտեսական ախոյաններ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ (XXII), Երևան, 2003, էջ. 8:

[7] Азеринформ, 1991, 16 августа, մեջբերված է Բայբուրդյան Վ., նշվ. աշխ., էջ. 9:

դիմեց իսլամական գաղափարախոսության քաղաքական գործառույթի կիրառմանը:

Իրանական կրոնական ազդեցությունը Ադրբեջանում ուղիղ համեմատական է ԻԻՀ և ԱՀ դիվանագիտական հարաբերությունների զարգացման մակարդակին: Նորանկախ Ադրբեջանի առաջին նախագահ Այազ Մութալիբովի (1990-1992թթ.) կառավարման ժամանակաշրջանում Ադրբեջանը դեռ գտնվում էր Մոսկվայի ազդեցության տակ և փորձում էր բարիդրացիական հարաբերություններ կառուցել ԻԻՀ-ի հետ: 1990-1991 թթ. Իրանից իսլամական քարոզիչների մեծ հոսք եկավ Ադրբեջան: Իրենց օգնությամբ վերակառուցվեցին հին և կառուցվեցին նոր մզկիթներ, մեդրեսեներ, ակտիվացավ իսլամական գաղափարների քարոզությունը: Ադրբեջանը ներկայացվում էր իսլամական աշխարհի և քաղաքակրթության անբաժան մաս, սակայն, միևնույն ժամանակ, իսլամը ժողովրդի լայն զանգվածների շրջանում ստանում էր ազգային դիմագիծ և դիտարկվում որպես պանթուրքիզմի անբաժան տարր: Ադրբեջանի Ազգային Ճակատի իշխանության տարիներին՝ Աբուլֆազ Էլչիբեյի ղեկավարությամբ (1992-1993թթ.), Ադրբեջանի համար աշխարհիկ Թուրքիայի սուննի իսլամական մոդելը համարվեց ամենահամապատասխանը, և երկրի արտաքին քաղաքական ուղեծիրը կտրուկ շրջվեց դեպի Թուրքիա: Իսլամիստական գաղափարները չունեին ամուր հիմքեր երկրում և հեշտությամբ իրեց տեղը զիջեցին պանթյուրքական, ազգայնական և եվրոպամետ գաղափարներին: Էլչիբեյի շեշտված հակաիրանական դիրքորոշումը նպաստեց նաև ԻԻՀ և Հայաստանի Հանրապետության միջև հարաբերությունների ամրապնդմանը և ղարաբաղյան հակամարտության ժամանակ հայկական կողմին իրանական նյութական օգնության տրամադրմանը: Դրա արդյունքը եղավ ադրբեջանա-իրանական

միջպետական հարաբերությունների հետագա վատթարացումը և Ադրբեջանի բնակչության շրջանում Իրանի նկատմամբ բացասական՝ անգամ թշնամական վերաբերմունքի ձևավորումը:

Հեյդար Ալիևը (1993-2003թթ.) իր նախագահության սկզբնական շրջանում հանդուրժողական քաղաքականություն էր վարում օտարերկրյա իսլամական քարոզիչների գործունեության նկատմամբ, քանի որ Ադրբեջանի տնտեսական դրությունը ծանր էր և այն գտնվում էր նյութական կախման մեջ ինչպես ԻԻՀ -ից, այնպես էլ իսլամական այլ երկրներից: Սակայն 1994 թ.-ից սկսած, երբ Ադրբեջանը ստորագրեց նավթային «դարի պայմանագիրը» [8] և որդեգրեց բացահայտ արևմտամետ արտաքին քաղաքականություն, հարաբերություններն ԻԻՀ-ի հետ սրվեցին, ինչն արտահայտվեց երկրի ներսում իրանական ազդեցություն ունեցող կրոնական կառույցների և շարժումների ճնշմամբ[9]: Թեև Իլհամ Ալիևը (1993թ.-ից մինչ օրս) շարունակեց հոր քաղաքականությունը և ավելի խիստ վերահսկողություն սահմանեց կրոնական ոլորտի վրա[10], իսլամական

[8] 1994 թ. սեպտեմբերի 20-ին Ադրբեջանի Պետական նավթային ընկերության և 11 արտերկրյա նավթային ընկերությունների միջև ստորագրվեց Կասպից ծովի ադրբեջանական հատվածում «Ազերի», «Չըրագ», «Գյունեշլի» նավթային հանքավայրերի համատեղ շահագործման մասին պայմանագիր: Այն ստացավ «Դարի պայմանագիր» անվանումը, քանի որ շրջադարձային դարձավ Ադրբեջան-Արևմուտք հարաբերությունների համար:

[9] 1996 թ. խորհրդարանի ընդունած օրենքի համաձայն՝ արգելվեց օտարերկրյա քարոզիչների գործունեությունը Ադրբեջանում, բոլոր իսլամական կազմակերպությունները և մզկիթները դրվեցին Կովկասի մուսուլմանների հոգևոր վարչության տնօրինության տակ: Իրանի քաղաքացի բազմաթիվ կրոնական գործիչների մուտքը Ադրբեջան արգելվեց, փակվեցին իրանական ֆինանսավորմամբ բոլոր մեդրեսեները, անօրինական համարվեց Իրանից կրոնական գրականության ներմուծումը և այլն:

[10] Տեղի ունեցան իսլամական գործիչների մասսայական ձերբակալություններ, 2009թ. դավանանքի ազատության մասին օրենքում կատարված փոփոխության

տրամադրությունները երկրում ուժեղացան: Դա պայմանավորող կարևոր գործոններից է երկրի սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակը, տոտալիտար կառավարման համակարգի հաստատումը, որի արդյունքում էլ գրեթե բացառվում է այլախոհության որևէ դրսևորում և աշխարհիկ ընդդիմության գոյության հնարավորություն: Այս պայմաններում իսլամական կառույցները կարող են իրենց վրա ստանձնել ընդդիմադիր զանգվածի համախմբման գործընթացի իրականացումը:

Իրանական իսլամական կառույցները Ադրբեջանում և դրանց քարոզչության մեթոդները

Անկախություն ձեռք բերելուց հետո Ադրբեջանը դարձավ իրանական կրոնական քարոզչության թիրախ: Այն բախվեց իսլամական քարոզիչների, բարեգործական կազմակերպությունների, կրթական հաստատությունների, լրատվամիջոցների միջոցով երկիր ներթափանցող իրանական իսլամական հոսանքի հետ:

Իրանից իսլամական քարոզչության համար ամենախոցելի տարածքները Ադրբեջանի սահմանակից հարավային շրջաններն են, որտեղ հոծ քանակով բնակվում են իրանալեզու բնիկ ժողովուրդներից թալիշները, ինչպես նաև Ապշերոնյան թեակղզին, որտեղ կենտրոնացած է մեկ այլ իրանական ծագման ժողովուրդ՝ թաթերը (կովկասյան պարսիկներ): Անկախության սկզբնական տարիներին երկիրը գտնվում էր քաղաքական, սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակում, և ԻԻՀ-ն առաջինն էր, ով

համաձայն՝ արտերկրում կրոնական կրթություն ստացած անձանց արգելվում է իսլամական կրոնական արարողությունների անցկացումը, փակվեցին կամ քանդվեցին բազմաթիվ մզկիթներ, արգելվեց կրթական հաստատություններում գլխաշորի կրումը, կրոնական տոների, ծիսակարգերի զանգվածային անցկացումը մզկիթների տարածքներից դուրս, 2016 թ. ընդհնրապես արգելվացին Աշուրայի երթերը:

օգնության ձեռք մեկնեց Ադրբեջանին ու 1993-1994թթ. սահմանային տարածքում՝ մասնավորապես Իմիշլի, Սաաթլը և Սաբիրաբադ քաղաքների շրջակայքում փախստականների համար կառուցեց 7 վրանային ճամբարներ[11]: Բարեգործական կազմակերպությունները, բացի նյութական օգնությունից, իրենց վրա վերցրեցին շիայական գաղափարների տարածումը: Ադրբեջանում բարեգործական գործունեություն ծավալող հիմնական կազմակերպությունը «Իմամ Խոմեյնի Իմդադ» կոմիտեն էր (Իմամ Խոմեյնիի անվան օգնության կոմիտե), որն ակտիվ գործունեություն էր ծավալում հատկապես փախստականների շրջանում: Ղարաբաղյան պատերազմի տարիներին շրջափակման մեջ գտնվող Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը կարողացավ զոյատևել այս կոմիտեի բազմակողմանի օգնության շնորհիվ: 1993թ. այն ներկայացուցչություններ բացեց Բաքվում, Լենքորանում, Գյանջայում (Գանձակ), Գյոյչայում, Նախիջևանում և մինչև 2001թ. Ադրբեջանում արդեն ուներ 415 գրասենյակ[12]: Կոմիտեն իր հովանավորության տակ էր վերցրել 7000 ընտանիք (մոտավորապես 25 հազար մարդ)՝ տալով անվճար կրոնական կրթություն, կազմակերպելով ուխտագնացություններ դեպի Իրանի սրբավայրեր, անցկացնելով մասսայական անվճար հարսանիքի արարողություններ և տրամադրելով այլ նյութական օգնություն: 20 տարիների ընթացքում «Իմդադ» կոմիտեն Ադրբեջանում իրականացրել է մոտավորապես 43 միլիոն դոլարի

[11] 1996 թ. իրանական կողմի օժանդակությամբ ստեղծված փախստականների 7 ճամբարները փոխանցվեցին արևմտյան մարդասիրական և միջազգային կառույցներին (ՄԱԿ,Կարմիր Խաչ և այլն):

[12] Valiev A., Azerbaijan: Islam in Post-Soviet Republic, MERIA journal, Thursday, December 8, 2005 p. 8, http://www.rubincenter.org/meria/2005/12/valiyev%20pdf.pdf

ներդրում[13]: Սակայն, դրանով հանդերձ, այդ կառույցը օժանդակում էր անօրինական իսլամական քարոզչությանը և Իրանից Ադրբեջան արգելված կրոնական գրականություն տարածմանը: «Բրնձի հետ միասին նրանք բերում էին Խոմեյնիի նկարները, կրոնական և թալիշական ինքնության վերաբերյալ գրքեր» վերհիշում է փախստականների ճամբարի բնակիչներից մեկը[14]: 2013թ. ադրբեջանական կառավարությունը փակեց «Իմամ Խոմեյնի Իմդադ» կոմիտեն՝ պատճառաբանելով, որ երկրի տնտեսությունը բավական զարգացած է, և կարիք չկա օտարերկրյա բարեգործական օժանդակության:

Կրոնական քարոզչության տեսքով «փափուկ ուժի» կիրառման մյուս կարևոր և արդյունավետ դաշտը կրթական ոլորտ էր: Իրանական պետական և մասնավոր բազմաթիվ հիմնադրամեր սկսեցին ադրբեջանցի ուսանողներին տրամադրել կրթաթոշակներ՝ ԻԻՀ-ում՝ մասնավորապես Ղոմ և Նաջար քաղաքներում կրոնական կրթություն ստանալու համար: Ադրբեջանի իշխանությունները սկզբնական շրջանում չէին խոչընդոտում ուսանողների արտահոսքին, քանի որ դեռևս հնարավորություն չկար երկրի ներսում ապահովել որակյալ կրոնական կրթություն, իսկ գոյություն ունեցող կադրերի քանակն էլ սահմանափակ էր: Ուսանողների հիմնական հոսքը Ադրբեջանի հարավային շրջաններից էր՝ մասնավորապես Լենքորանից, Մասալլից, Լերիկից, Նախիջևանից, որոնց մեծամասնությունը (200-250 ուսանող) կրոնական ուսում էր ստանում Ղոմ քաղաքի Հոջաթիե և Իմամ Խոմեյնի անվան մեդրեսեներում: Ղոմում սովորում էին նաև Թուրքիայի,

[13] Imam Xomeyni adına Komitəsinin Azərbaycan nümayəndəliyi fəaliyyətini tam dayandırdı, 28 Yanvar, 2014, https://az.trend.az/azerbaijan/society/2235034.html

[14]Azerbaijan: Independent Islam and The State, International Crisis Group, Europe Report N°191, 25 March 2008, p. 7.

Վրաստանի ադրբեջանցիներ, որոնք ադրբեջաներեն էին թարգմանում Իրանում հրատարակված կրոնական գրականությունը և 1992-1993թթ. տարածում Ադրբեջանի գլխավոր գրախանութներում[15]: Կրթաթոշակներ տրամադրող մասնավոր հիմնադրամներից ազդեցիկ էր «Ահլի Բեյթ» («Մարգարեի ընտանիք» կամ «Տան մարդիկ») կազմակերպությունը, որը հայտնի է նաև Ադրբեջանի տարածքում հումանիտար օգնության ցուցաբերմամբ և Սումգայիթում, Բաքվում իրանական կրոնական գրականության վաճառքով[16]: Ադրբեջանցի ուսանողների համար կրթաթոշակներ էին տրամադրում նաև շիայական հեղինակավոր առաջնորդներ՝ ինչպիսիք են Այաթոլլահ Ֆազիլ Լենքորանին, Այաթոլլահ Ալի ալ-Սիստանին: Արդյունքում՝ Ադրբեջանի բազմաթիվ քաղաքացիներ՝ մի կողմից որակյալ կրոնական կրթություն ստանալու նպատակով, մյուս կողմից սոցիալական ծանր պայմանների հետևանքով, ուսում ստանալով Իրանում, վերադառնում էին Ադրբեջան և տարածում արմատական շիայական գաղափարներ՝ դառնալով իրանական «փափուկ ուժի» գործիքը:

Բաքվում՝ Իրանական դեսպանատանը կից, ստեղծվեց իսլամական մշակութային կենտրոն՝ կրոնական գրադարանով և երկրում միակ հատուկ մզկիթով՝ շիաների համար սգո օր համարվող Աշուրայի ժամանակ իմամ Հուսեյնի տանջանքներին նվիրված կրոնական արարողությունների անցկացման համար: Մի քանի տարվա ընթացքում Իրանի աջակցությամբ Ադրբեջանում կառուցվեցին ավելի քան 150 մեդրեսեներ: Դրանց

[15] Балджи Б., Судьба шиизма в постсоветском Азербайджане, Этнографическое обозрение N 2, Москва, 2006, стр. 77.
[16] Hasanov B., Azerbaycan'da Din: Sovetler'den Bağımsızlığa Hafıza Dönüşümleri, Istanbul, 2011, s. 211.

մի մասը ֆինանսավորվում էր Իրանի կառավարության կողմից, իսկ մյուս մասը՝ ականավոր շիայական առաջնորդների, որոնք անգամ հանդես էին գալիս Խոմեյնիի որոշ սկզբունքների դեմ[17]: Իրանի տարածքից հեռարձակվող Սահար հեռուստաընկերությունը, որը հասանելի է Ադրբեջանի հարավային շրջաններում, ցուցադրում է թալիշական ինքնության պահպանմանը, իրավունքների պաշտպանությանն ուղղված հաղորդումներ, տարածում է Բաքվի կառավարությանը քննադատող և իրանամետ գաղափարներ:

Իսլամական գաղափարների տարածման գործում կարևոր նշանակություն ունի նաև շիայական գրականությունը, որի ներմուծումը Ադրբեջան, իրականցվում էր իսլամական քարոզիչների և տարբեր բարեգործական, կրթական հաստատությունների միջոցով: Կարելի է ասել՝ 1992 թ.-ից մինչև 2010 թ. իսլամը և կրոնական հարցերը մեկնաբանող գրականության ճնշող մեծամասնությունը գալիս էր Իրանից: Սակայն Կրոնական կազմակերպությունների հարցերով պետական կոմիտեի ստեղծումից հետո (2001թ.) դժվարացավ իսլամական գրականության ներկրումը: Օրինակ՝ մինչև 2010թ. կոմիտեն վերանայել է ավելի քան 18.000 գիրք և արգելել 348 գրքի վաճառքն Ադրբեջանում[18]: Մեծ դեր է խաղում իսլամական «Ալ-Խոդա» հրատարակչությունը, որը չնայած ադրբեջանական կառավարության կողմից վնասակար ազգայնական գրականություն տարածելու մեղադրանքով փակվեց, սակայն

[17] Goyushov A., Islamic Revival in Azerbaijan, https://www.hudson.org/research/9815-islamic-revival-in-azerbaijan

[18] Valiyev A., Iranian soft religious power in Azerbaijan: old new threat for Baku, Religion and Soft Power in South Caucasus, Policy Perspective, Eds. Jödicke A., Kakachia K., Tbilisi, 2017, p. 72.

նորից վերսկսեց իր գործունեությունը՝ շեշտը դնելով կրոնական գրականության վրա:

ԻԻՀ հովանավորությամբ Ադրբեջանում իսլամի քաղաքականացման վառ օրինակ է թ1991. Ադրբեջանի Իսլամական Կուսակցության (ԱԻԿ) առաջացումը: Այն պաշտոնապես գրանցում ստացավ 1992 թ, սեպտեմբերի 2-ին, որի կենտրոնը դարձավ Ապշերոնյան թերակղզում գտնվող Նարդարան գյուղը, որտեղի բնակիչներն անգամ սովետական իշխանության տարիներին հանդես են եկել իսլամական ավանդույթների պահապանի դերում: ԱԻԿ գաղափարախոսության հիմքում այն համոզմունքն էր, որ միայն իսլամը կարող է խաղալ համակարգող դեր անկախ Ադրբեջանի կառուցման գործընթացում: Կուսակցության երկու թերթերի՝ «Իսլամ դունյասը» («Իսլամական աշխարհ») և «Իսլամընն սեսի» («Իսլամի ձայնը») միջոցով քարոզվում էր հակաթուրանականության և հակասեմիթականության գաղափարները: 1995թ. Խորհրդարանական ընտրությունների նախօրեին Ադրբեջանի Արդարադատության նախարարությունը սկսեց հասարակական կազմակերպությունների և քաղաքական կուսակցությունների գործունեության ստուգման և վերագրանցման գործընթաց: Արդյունքում՝ որոշ ընդդիմադիր կուսակցություններ՝ այդ թվում նաև Ադրբեջանի Իսլամական կուսակցությունը, չանցան վերագրանցումը: Ճնշումները կուսակցության նկատմամբ շարունակվեցին, և 1996 թ. մայիսին կուսակցության առաջնորդին՝ հաջի Ալիաքրամ Ալիևին և չորս այլ ղեկավարներին հայրենիքը դավաճանելու և Իրանի օգտին լրտեսություն անելու մեղադրանքով դատապարտեցին: Ադրբեջանական կառավարության տվյալների համաձայն՝ ԱԻԿ

երիտասարդ անդամները ուղարկվում էին Իրան՝ հատուկ ճամբարներում ռազմա-քաղաքական պատրաստություն անցնելու՝ հետագայում Ադրբեջանում իսլամական հեղափոխություն իրականացնելու հեռահար նպատակով: Թեև ԱԻԿ գործունեությունը արգելվեց Ադրբեջանում, այն շարունակեց կիսաընդհատակյա իր գործունեությունը և, համագործակցելով այլ ընդդիմադիր կուսակցությունների հետ, հանդես է գալիս վերափոխված գաղափարներով՝ շեշտը դնելով ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության վրա: Այսօր այն որոշ ազդեցություն ունի Նարդարանի շրջանում, որտեղ 2015 թ. սկզբին հիմնադրվել է մեկ այլ կրոնական կազմակերպություն՝ Ադրբեջանի «Մուսուլմանական միություն» շարժումը՝ շիայական հոգևորական Թալեհ Բաղիրզադեի գլխավորությամբ: Շարժումը հանդես էր գալիս ԱԻԿ անդամների, ինչպես նաև այլ քաղբանտարկյալների ազատագրման պահանջով, ուսումնական հաստատություններում հիջաբի արգելքի և երկրում բռնատիրական կարգերի հաստատման դեմ: Նարդարանում ձևավորվող հավանական ընդդիմադիր իսլամական ուժի սպառնալիքը չեզոքացնելու նպատակով՝ կառավարությունը օգտագործեց 2015 թ. հերթական ցույցերը բիրտ ուժ կիրառելու և շրջանում խիստ վերահսկողություն սահմանելու համար:

1990-ական թվականների առաջին կեսին Ադրբեջանում գործում էին նաև իրանական ոչ պաշտոնական ծայրահեղական իսլամական կառույցներ, որոնք հաստատվել էին հարավային՝ Յարդըմլըի, Լերիկի, Մասալըի շրջաններում: Դրանցից ամենաակտիվն էր «Հեզբոլլահ» («Ալլահի կուսակցություն») խմբավորումը, որի ղեկավարը մինչև 2000թ. Թահիր Ռավազանովն էր: 1997 թ. սկզբին ադրբեջանական թերթերը հաղորդում էին, որ հարյուրավոր ադրբեջանցի երիտասարդներ վերապատրաստում են անցել իրանական «Հեզբոլլահ»-ի ճամբարներում և այժմ հետ են

ուղարկվել Ադրբեջան՝ նրա գաղափարները տարածելու համար: Գործում էր նաև «Հուսեյնիյա» («Հուսեյնի կողմնակիցներ»), «Դերվիշ» կազմակերպությունները, «Իմամի» («Իմամներ»), «Զեյնաբիլար» («Զեյնաբի կողմնակիցներ») կրոնական միությունները, դպրոցականների շրջանում ստեղծվեց «Գյանջ իմամլար» («Երիտասար իմամներ») միությունը և այլն[19]: Քանի որ այս կազմակերպությունները ընդհատակյա են և ունեն միայն տեղային ազդեցություն, հստակ տեղեկություն չկա դրանց գործունեության վերաբերյալ, սակայն, ժամանակ առ ժամանակ, ադրբեջանական լրատվամիջոցներում հայտնվում են կազմակերպության անդամների կողմից ԻԻՀ-ի հովանավորությամբ երկրում իսլամական հեղափոխության փորձերի և նրանց ձերբակալությունների մասին տեղեկատվություններ:

Ադրբեջանի Հանրապետությունը շարունակում է մնալ օտարերկրյա տարբեր կրոնական հոսանքների, իսլամական ահաբեկչական խմբավորումների գործունեության տարածման հարթակ: Թեև Ադրբեջանում պաշտոնական իսլամական ուղղությունը շիայականությունն է, սուննիական կրոնական ներկայությունը երկրում (ներթափանցած մասնավորապես Սաուդյան Արաբիայից, Քուվեյթից, Հյուսիսային Կովկասից, Թուրքիայից), ավելի զգալի է քան շիայականը: Ադրբեջանի կառավարությունը Իրանից եկող իսլամական քարոզչությունը ներկայացնում է որպես մեծ վտանգ՝ կայունության և քաղաքացիական համերաշխության սպառնալիք, ինչն ուղղված է Իրանի կողմից Ադրբեջանի ամբողջական կլանմանը: Իրանական

[19] Իրանական ոչ պաշտոնական կրոնական հոսանքների մասին Ադրբեջանում մանրամասն տե՛ս Юнусов А., Ислам в Азербайджане, Баку, 2004, стр. 239-244:

ազդեցությունը չեզոքացնելու համար Ադրբեջանը շեշտը դնում է յուրօրինակ «ազգային իսլամի» վրա՝ նվազագույնի հասցնելով իսլամի երկու ճյուղերի միջև առկա տարբերությունները՝ դրանով փորձելով մեկուսանալ իրանական շիայական կրոնական կենտրոններից: «Ազգային իսլամը» ընկալվում է որպես երկար պատմական ուղղու ընթացքում Իրանի կրոնական գերիշխանությունից ազատագրվելու փուլ[20]: Երկու երկրների միջև առկա քաղաքական լուրջ խնդիրները[21] նույնպես սահմանափակում են իրանական իսլամական ազդեցության տարածումը Ադրբեջանում: Սակայն ԻԻՀ-ն ԱՀ-ի հետ հարաբերություններում շարունակում է օգտագործել իսլամի տարածման քաղաքական գործոնը: Այն, կախված քաղաքական իրավիճակից, փոխում է միայն մարտավարությունը: Ադրբեջանում տեղի ունեցող հակաշիայական ցանկացած գործողություն գտնում է Իրանի պաշտոնական արձագանքը:

[20] Светоховский Т., Ислам и национальное самосознание на пограничных территориях: Азербайджан, Религия и политика на Кавказе, Материалы международной конференции, Ред. Искандарян А., Кавказский институт СМИ, Ереван, 2004, стр. 27.

[21] Այսպես կոչված «Հարավային Ադրբեջանի» խնդիրը, որը որպես քաղաքական լծակ պաշտոնապես օգտագործվում է Ադրբեջանի կառավարության կողմից՝ ԻԻՀ-ում անջատողական շարժումներ առաջացնելու նպատակով, Կասպից ծովի ավազանի շահագործման խնդիրը, որի պատճառով 2001 թ. անգամ ստեղծվեց նախապատերազմական իրավիճակ, Ադրբեջան-Թուրքիա-Իսրայել ռազմական եռանկյունու ձևավորումը, Իրան-Հայաստան միջպետական սերտ հարաբերությունները և այլն:

ИСЛАМСКОЕ ВЛИЯНИЕ ИРАНА НА АЗЕРБАЙДЖАН

(Резюме)

Чобанян Гаяне

После распада СССР Азербайджан стал основной мишенью исламского влияния Ирана. Он столкнулся с волной исламизма, которая проникла в страну через иранских миссионеров, благотворительные организации, учебные заведения, средства массовой информации. Несмотря на то, что основная часть населения Азербайджана проповедует шиитское течение ислама, иранские исламские идеи были восприняты как угроза национальной безопасности страны и уступили место пантюркистским, националистическим и проевропейским идеям. Азербайджан перенял суннитскую исламскую модель светской Турции. Существующие серьезные политические противоречия между двумя странами также ограничивают распространение иранского исламского влияния в Азербайджане. Однако Иран не отказался от использования ислама как инструмента распространения политического влияния в Азербайджане. В зависимости от политической конъектуры официальный Тегеран только меняет стратегию.

IRANIAN ISLAMIC INFLUENCE ON AZERBAIJAN
(Summary)

Chobanyan Gayane

After the collapse of the Soviet Union, Azerbaijan became a target of Iranian Islamic influence. It came across a wave of Islamism brought into the country by missioners, charity organisations, educational institutions and mass media. Despite the fact that the majority of Azerbaijanis are followers of Shia Islam, the Iranian Islamic ideology was regarded as a threat to the national security. Azerbaijan adopted secular Turkey's Sunni Islamic model and the Islamic ideas were replaced by pan-Turkish, nationalistic and pro-European ones.

The serious political problems existing between Azerbaijan and Iran do not allow the Iranian Islamic influence to fully spread across Azerbaijan. However, Iran continues using the Islamic factor as leverage over Azerbaijan. Depending on the political context, the official Tehran only modifies its strategy.